# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 69- 70 (16265) ՇԱԲԱԹ, 6 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ


ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

## ՎՐԱՍՏԱՆԸ՝ ԱԼՅԱՆՍԻ «ՈՍԿԵ ՔԱՐՏԻ» ՀԱՎԱԿՆՈՐԴ

*Սեպտեմբերի 4-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, պատվիրակության հետ միասին, մասնակցեց Միացյալ Թագավորության Ուելսի Նյուպորտ քաղաքում անցկացված ՆԱՏՕ-ի խորհրդաժողովի աշխատանքին:*




կառույցների ինտեգրման հարցերով պետնախարար Ալեքսի Պետրիաշվիլին:

Ուելսում, Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ 28 երկրների ղեկավարների մասնակցությամբ, անցկացված ՆԱՏՕ-ի գագաթաժողովում քննարկվեցին «գլոբալ անվտանգության մարտահրավերները եւ դաշինքի ադապտացումը ապագայի աշխարհին»: Աշխատանքի արդյունքներով ընդունվեցին երկու փաստաթղթեր՝ Կոմյունիկե եւ Անդրատլանտյան հռչակագիրը: Գագաթա-

Վրաստանի նախագահի գլխավորած պատվիրակության կազմում էին պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան, արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն, եվրոպական եւ եվրատլանտյան


(Շարունակությունը՝ 2-րդ էջում)


ՀԱՅԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՆԱՏՕ-Ի ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎՈՒՄ

*Սեպտեմբերի 4-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Միացյալ Թագավորությունում մասնակցեց Ուելսի ՆԱՏՕ-ի գագաթաժողովին:*




Այցի շրջանակներում, Հայաստանի նախագահը մասնակցեց այլանսի անդամ-երկրների ղեկավարների՝ Աֆղանստանի հարցի շուրջ անցկացված հանդիպմանը:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսսենը եւ Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեւիդ Քեմերոնը ողջունել են Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին: Հանդիպմանը ներկա էին ՆԱՏՕ-ի անդամների եւ 27 գործընկեր-երկրների նախագահներ ու վարչապետեր: Հանդիպմանը Հայաստանի նախագահը հանդես եկավ ելույթով: ՆԱՏՕ-ի Ուելսի գագաթաժողովի շրջանակներում Հայաստանի նախագահն անցկացրեց մի շարք երկկողմ հանդիպումներ: Ուելսում ընթացող ՆԱՏՕ-ի գագաթաժողովի շրջանակում սեպտեմբերի 4-ին Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը մասնակցեց ՆԱՏՕ-ի անդամ եւ գործընկեր պետությունների պաշտպանական գերատեսչությունների 52 ղեկավարների ձեւաչափով հանդիպմանը: Նիստի ժամանակ մեկնարկել է ՆԱՏՕ-ի եւ գործընկեր պետությունների միջեւ «Փոխգործունակության հարթակ» նախաձեռնությունը:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

## ՎՐԱՍՏԱՆԸ ԱՄՆ-Ի ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԲԱՐԵԿԱՄՆ Է ՈՒ ԴԱՇՆԱԿԻՑԸ

*Սեպտեմբերի 1-ին Թբիլիսիում աշխատանքն սկսեց լիդերների միջազգային խորհրդաժողովը: Խորհրդաժողովի բացմանը ներկա էին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, կառավարության անդամներ, պատգամավորներ:*




Երկրի նախագահն իր ելույթում հիմնական շեշտը դրեց խորհրդաժողովի շրջանակներում քննարկվելիք հարցերի հրատապության վրա: «Շատ հարցեր, որոնք ծագել են տարածաշրջանում զարգացող իրադարձությունների ֆոնի վրա առա-


(Շարունակությունը՝ 2-րդ էջում)


ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾ

## ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԿԳԼԽԱՎՈՐԻ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ

*Սեպտեմբերի 3-ին Վրաստանի խորհրդարանը քննարկեց «Պետական լեզվի մասին» օրենքի նախագիծը:*

Ներկայացված օրինանախագիծը սահմանում է պետական լեզվի կարգավիճակը, դրա պաշտպանության երաշխիքները, պետական եւ մյուս լեզուների օգտագործման յուրահատկությունները, կրթության, լեզվի ընտրության հնարավորությունը, պետական լեզվի օգտագործման իրավական սկզբունքները: Բացի այդ, նախագիծը սահմանում է պե-


(Շարունակությունը՝ 2-րդ էջում)


ՎԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

## ԳՅՈՒՄՐԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ

*Բաթումիի քաղաքապետ Գիորգի Երմակովի հրավերով, պաշտոնական այցով Բաթումիում էր գտնվում Գյումրիի քաղաքապետ Սամվել Բալասանյանը, ով առաջին անգամ մասնակցում էր Բաթումի քաղաքի օրվա տոնակատարությանը, որն այս տարի անցկացվել է «Բաթումին բարեկամության քաղաք է» խորագրով:*



Սամվել Բալասանյանը նախ ներկա է գտնվել նորընտիր քաղաքապետ Գիորգի Երմակովի ընդունելությանը Բաթումիի քաղաքապետարանում, որին մասնացել են 9 պետությունների պատվիրակներ: Հանդիպման ընթացքում եւ շրջայցերի ժամանակ պատվիրակություններին ներկայացվել են ինչպես օտարերկրյա ներդրողների կողմից


(Շարունակությունը՝ 2-րդ էջում)


ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱՆ ԸՆԴԱՌԱՋ

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԿՄԵԿՆԱՐԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ

*Ինչպես տեղեկացրել է Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը, Վրաստանի բոլոր դպրոցներում ուսումնական տարին կմեկնարկի սեպտեմբերի 15-ին եւ կշարունակվի մինչեւ հունիսի 12-ը:*

«Վրաստանի կրթության եւ գիտության նախարարի հրամանագրում կատարված փոփոխությունների համաձայն, Վրաստանի հանրակրթական հաստատություններում նոր ուսումնական տարվա մեկնարկը նշվել էր սեպտեմբերի 10-ից հետո առաջին երկուշաբթի օրը (սեպտեմբերի 15-ը), իսկ ուսումնական տարվա ավարտը՝ հունիսի առաջին ուրբաթը՝ 10-ից հետո (հունիսի 12-ին)»,- ասված է գերատեսչության հայտարարության մեջ:

Առաջին դասարանի աշակերտների եւ շրջանավարտների համար ուսումնական տարին կավարտվի 2015 թվականի մայիսի 20-ին, իսկ այն դեպքում, եթե այդ ամսաթիվը համընկնում է հանգստյան օրերի հետ, ապա ուսումնական գործընթացն ավարտվում է մինչեւ մայիսի 20-ը՝ այդ շաբաթվա վերջին աշխատանքային օրը:

Վրաստանի հանրային դպրոցներում ձմեռային արձակուրդները կսկսվեն 2014 թվականի դեկտեմբերի 30-ին եւ կշարունակվեն մինչեւ 2015 թվականի հունվարի 14-ը ներառյալ:

Այս տարի, նախարարության որոշմամբ, 509650 աշակերտ անվճար կստանա 4033295 դասագիրք եւ աշխատանքային տետր: Նոր դասագրքերը տպագրվել են որակյալ թղթի վրա եւ քաշով զգալիորեն զիջում են նախկին նմուշներին:

Բացի այդ, ինչպես տեղեկացրել է կրթության եւ գիտության նախարարությունը, առաջին դասարանցիները եւ նրանց մանկավարժները կստանան նաեւ բարելավված տեխնիկական տվյալներով նոր համակարգիչներ:

Լրացուցիչ կարգով 100 դպրոցում կգործեն դպրոցական անվճար ավտոբուսներ:

Նոր ուսումնական տարվա սկզբից պետական հանրային դպրոցներում կվերականգնվեն բժշկական կաբինետները:


(Խորագրի շարունակությունը՝ 4-5-րդ էջերում)


ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՍԿՍԵԼ Է ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

*Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը Եվրամիության խորհրդի գլխավոր քարտուղարությունից ստացել է պաշտոնական նոտա Եվրամիության կողմից Ասոցիացման համաձայնագրի առանձին հատվածների ժամանակավոր կիրարկման համար անհրաժեշտ ընթացակարգի ավարտի կապակցությամբ:*



Իր հերթին, Վրաստանի ԱԳ նախարարությունը քարտուղարությանը պաշտոնապես տեղեկացրել է համաձայնագրի կիրարկման համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը հուլիսի 25-ին ավարտելու մասին: Հետեւաբար, Եվրամիության ընթացակարգի համաձայն, Վրաստանի եւ Եվրամիության միջեւ Ասոցիացման համաձայնագրի առանձին կոնկրետ հատվածները ժամանակավորապես սկսել են կիրարկվել ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ից: Վերոնշյալի հաշվառմամբ, ուժի մեջ է մտնում համաձայնագրի կետերի 80 տոկոսը, այդ թվում՝ ծավալուն եւ համընդգրկուն ազատ առեւտրի պայմանագիրը:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

# ՎՐԱՍՏԱՆԸ ԱՄՆ-Ի ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԲԱՐԵԿԱՄՆ Է ՈՒ ԴԱՇՆԱԿԻՑԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վել նշանակալից են դարձնում նման միջոցառումների անցկացումը: Այսօր մենք հանդիսանում ենք այն երկիրը, որը փորձում է կառուցել արդի ժողովրդավարական պետություն: Վրաստանի նման երկրները, որտեղ պատերազմներ են ընթանում, պատժված են ազատ ընտրություն կատարել: Ժողովրդավարական ազատ երկրների դեմ իրականում գոյություն ունեն մարտահրավերներ»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Իր հերթին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին իր ելույթում հիմնականում անդրադարձավ երկրում ընթացող բարեփոխումների թեմային: Նրա խոսքերով, կենսական բոլոր ոլորտներում իրականացվող բարեփոխումները որոշակի փուլում կորցնում են արդյունավետությունը, իմ գլխավորած կառավարությունն իշխանություն եկավ Վրաստանի պատմության մեջ առաջին անգամ անցկացված իրական ազատ ընտրությունների արդյունքում, եւ առաջին անգամ իրականացվեց իշխանափոխության խաղաղ գործընթաց: Մեր կառավարության հիմնական մասը կազմում են իրավապաշտպաններն ու նախկին դիվանագետները: Այնպես որ, գալով իշխանության գլուխ, մենք հստակ պատկերացում ունենք, թե ինչ հիմնախնդիրներ պետք է կարգավորենք Վրաստանում ժողովրդավարության զարգացման համար»,- ընդգծեց վարչապետը: Նրա խոսքերով, իշխանության վերաբաշխումը երկրի ժողովրդավարական ինստիտուտների լիարժեք զարգացման պարտադիր պայմանն է: «Եվրամիության հետ համագործակցությամբ մենք մշակել ենք մարդու իրավունքների ազգային ռազմավարությունը եւ գործողությունների ծրագիրը, որի նպատակն է առաջիկա յոթ տարում երկրի իրավական եւ ինստիտուցիոնալ բազան, ինչպես նաեւ մշակույթն ու մարդու իրավունքների ասպարեզում գործողությունները մոտեցնել եվրոպական չափորոշիչներին: Ոչ մի այլ երկիր նման ծրագիր չունի, այն ներառում է իրավապահային, դատական եւ քրեակատարողական համակարգերը, աշխատանքի շուկան, սոցիալական սպասարկումները, ազգային եւ տեղական իշխանության ինստիտուտներն ու կառույցները»,- հայտարարեց վարչապետը:




Կառավարության ղեկավարի հավաստմամբ, Վրաստանն ԱՄՆ-ի ու Եվրոպայի հավատարիմ բարեկամն ու դաշնակիցն է, չնայած այն բանին, թե ով է գտնվում իշխանության ղեկին:

«Ժողովրդավարական հասարակության կառուցման ճանապարհին Վրաստանի համար վճռորոշ նշանակություն ունի եվրոպական ու եվրատլանտյան ինտեգրացումը: ԱՄՆ-ին ու Եվրոպային մերձենալու մեր աներեր որոշումը համընկնում է ժողովրդավարական վերափոխումների գործընթացը շարունակելու մեր նպատակի հետ: Դա համերաշխ եվրոպական ընտանիք վերադառնալու մեր ճանապարհն է»,- նշեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Նրա խոսքերով, Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագիրը եւ ՆԱՏՕ-ի հետ կապերի բարելավումը կրկին անգամ ընդգծում եւ հստակեցնում են մեր զարգացման գլխավոր ծրագիրը:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

# ՎՐԱՍՏԱՆԸ՝ ԱԼՅԱՆՍԻ «ՈՍԿԵ ՔԱՐՏԻ» ՀԱՎԱԿՆՈՐԴ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ժողովում համաձայնեցվեց Վրաստանի հետ ալյանսի համագործակցության նոր ձեւաչափը: Կոմյունիկեում նշվել է, որ ՆԱՏՕ-ն հաստատել է այն միջոցառումների փաթեթը, որոնք աջակցում են ՆԱՏՕ-ին անդամակցելու Վրաստանի ձգտմանը: Վրաստանի համար նախատեսված միջոցառումների փաթեթը կօգնի առաջ շարժվել դաշինքին անդամակցելուն նախապատրաստվելու հարցում: Միաժամանակ, նոր ձեւաչափը ալյանսին անդամագրվելը չի նախատեսում որպես վերջնական նպատակ: Նոր ձեւաչափով Վրաստանի մասնակցությունը արտահայտում է այն առաջընթացը, որը Վրաստանը ձեռք է բերել ՆԱՏՕ-ի հետ հարաբերություններում, ինչպես նաեւ ալյանսի հետ վրացական բանակի համագործակցության ունակությունը:

Կոմյունիկեում նշված է, որ այն նշանակալից ազդանշան է Ռուսաստանի համար:

Մեկնաբանները նշում են, որ Ուելսում Թբիլիսին ծրագրում էր ստանալ ճանաչման ավելի բարձր մակարդակ եւ խնդրում էր ընդունել Վրաստանին անդամակցության կապակցությամբ գործողության ծրագրի տրամադրման որոշում:

Այցի շրջանակներում, Վրաստանի նախագահը հանդիպում ունեցավ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենի հետ:

Գագաթաժողովի բացմանը նախորդած այդ հանդիպմանը Ռասմուսսենը Գիորգի Մարգելաշվիլուն շնորհավորեց ծննդյան 45-ամյակի առթիվ, ապա կողմերը քննարկեցին խորհրդաժողովի օրակարգի հարցերը: Առանձնակի քննարկվեց ՆԱՏՕ-ին մերձեցման նպատակով Վրաստանին ալյանսի կողմից առաջարկված ծրարը: Ռասմուսսենի հավաստմամբ, ծրարում ներառված գործառույթների կատարման դեպքում, Վրաստանն ընդհուպ կմոտենա ալյանսին:




Վրաստանի նախագահի եւ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հանդիպման ավարտից հետո, Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին ինտեգրման հարցերով պետնախարար Ալեքսի Պետրիաշվիլին հայտարարեց, որ Վրաստանը ներգրավված է այն հինգ երկրների թվում, որոնք կստանան «Ոսկե քարտ»:

ՆԱՏՕ-ի Ուելսի գագաթաժողովում Վրաստանը հինգ երկրների թվում կստանա «Ոսկե քարտ» եւ կդիտարկվի որպես «Թիվ 1 գործընկեր», ինչը նշանակում է ամենաբարձր կարգավիճակը՝ առանց դաշինքին փաստացի անդամակցության:

Այդ կարգավիճակը, որը կընդլայնի հետախուզական տվյալներից օգտվելու, վարժանքներին եւ ռազմական համագործակցության մյուս ոլորտներին մասնակցելու հնարավորությունները, կարող է տրամադրվել Վրաստանին, Շվեդիային, Ֆինլանդիային, Ավստրալիային եւ Հորդանանին:

Ուելս կատարած այցի շրջանակներում, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ միջազգային անվտանգության ապահովման առաքելության մասնակից երկրների ղեկավարների հավաքին: Այցի շրջանակներում, Վրաստանի ղեկավարը հանդիպում ունեցավ Թուրքիայի, Ռումինիայի, Լեհաստանի, Չեխիայի նախագահների հետ: Վրաստանի նախագահի գլխավորած պատվիրակությունը հանդիպում ունեցավ նաեւ եվրախորհրդի նախագահ Հերման Վան Ռոմպիեյի եւ եվրահանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարոզոյի հետ:

ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾ

# ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԿԳԼԽԱՎՈՐԻ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տական եւ տեղական իշխանության մարմինների գործունեության, գործավարման եւ դատավարության, ինչպես նաեւ արտաքին հարաբերությունների լեզուն:

Օրինանախագիծը նախատեսում է նաեւ անունների ու անվանումների, հանրային տեղեկատվության եւ զանգվածային լրատվամիջոցների տեղեկատվության լեզուն: Նշվել են այլ ոլորտներում, այդ թվում՝ գիտության մեջ, ինֆորմատիկայում եւ մշակույթի ոլորտում պետական լեզվի օգտագործման հետ առնչվող հարցերը: Նախագծում խոսվում է նաեւ պետական լեզվի իմացության նկատմամբ սահմանված որոշակի պահանջները:

Օրինանախագծով հիմնվելու է պետական լեզվի դեպարտամենտ եւ պետական լեզվի մշտական հանձնաժողովը: Օրինանախագծով նախատեսված են նաեւ «Պետական լեզվի մասին» օրենքի խախտման համար ներկայացվող պատասխանատվության չափերն ու պատժամիջոցները:

Ընդունված որոշման համաձայն, պետական լեզվի մշտական հանձնաժողովը կգլխավորի Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին: Վարչապետն ինքն է նշանակելու հանձնաժողովի համանախագահներին ու անդամներին: Վարչապետը իրավասու է նաեւ նշանակելու կամ ազատելու պետական լեզվի դեպարտամենտին: Մշտական հանձնաժողովը սահմանելու է վրաց լեզվի նորմերը, որոնք հետո պետք է հաստատվեն երկրի կառավարության կողմից:

ՎԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# ԳՅՈՒՄՐԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Բաթումիում արդեն իրականացված, այնպես էլ տարբեր ոլորտներում իրականացվելիք ծրագրերը: Վրացական լրատվամիջոցներին տված հարցազրույցներում Սամվել Բալասանյանը բարձր է գնահատել Բաթումիում տարեցտարի նկատվող դրական փոփոխությունները՝ ավելացնելով, որ քաղաքը դարձել է ավելի գրավիչ զբոսաշրջության եւ ներդրումների համար:

Գիորգի Երմակովը եւ Սամվել Բալասանյանը խոսել են Բաթումի եւ Գյումրի քաղաքների միջեւ համագործակցության առավել նպատակահարմար տարբերակներ գտնելու եւ մշակելու մասին՝ երկուստեք պատրաստակամություն հայտնելով աջակցել դրանց կյանքի կոչմանը: Իր հերթին, Գյումրիի քաղաքապետ Սամվել Բալասանյանը Բաթումիի իր գործընկերոջը, ինչպես նաեւ Աջարիայի հայ համայնքի պատվիրակությանը պաշտոնապես հրավիրել է ներկա գտնվել հոկտեմբերի 5-ին կայանալիք Գյումրի քաղաքի օրվա տոնակատարությանը:



ՈՒԿՐԱԻՆԱ

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ԻՐԱՎԻՃԱԿԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

*Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հայտնել է, որ սեպտեմբերի 3-ին կայացած հեռախոսազրույցի ընթացքում ինքն ուկրաինացի իր պաշտոնակցի՝ Պյոտր Պորոշենկոյի հետ քննարկել է Ուկրաինայի իրադրության կարգավորման ծրագիրը:*

*Առաջնահերթ միջոցառումների թվում նշված է Ուկրաինայի հարավ-արեւելքում Դոնեցկի եւ Լուգանսկի ուղղություններով աշխարհազորայինների զինված կազմավորումների ակտիվ հարձակողական գործողությունների դադարեցումը, հրադադարի պայմանների կատարման նկատմամբ լիարժեք եւ անկողմնակալ միջազգային հսկողության իրականացումը եւ այլն:*

*ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս ֆոգ Ռասմուսսենը, մեկնաբանելով Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի կողմից առաջարկված ծրագիրը, հայտարարել է, որ դաշինքը ողջունում է հակամարտության խաղաղ լուծմանն ուղղված բոլոր ջանքերը:*

## ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՀՐԱԴԱԴԱՐԻ ՇՈ՞ՒՐՋ

*Ուկրաինայի եւ Դոնեցկի ու Լուգանսկի ժողովրդական հանրապետությունների (ԴԺՀ) ներկայացուցիչների միջեւ ԵԱՀԿ-ի մասնակցությամբ շփման խմբի շրջանակներում սեպտեմբերի 5-ին Մինսկում կայացած բանակցություններում արձանագրություն է ստորագրվել ժամը 18:00-ից Դոնբասում հրադադար հաստատելու վերաբերյալ:*

*14 կետից բաղկացած արձանագրությունը ներառում է հսկողության, գերիների փոխանակման բոլոր ասպեկտները եւ մյուս հարցերը:*

*Ավելի վաղ հաղորդվել է, որ հանդիպմանը մասնակցում են Ուկրաինայի երկրորդ նախագահ Լեոնիդ Կուչման, Ուկրաինայում Ռուսաստանի դեսպան Միխայիլ Զուրաբովը, ԵԱՀԿ-ի հատուկ ներկայացուցիչ Հայդի Տալյավինին, ԴԺՀ վարչապետ Ալեքսանդր Զախարչենկոն եւ Լուգանսկի ժողովրդական հանրապետության ղեկավար Իգոր Պլոտնիցկին:*

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

## ԼԵՀԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՆՊԵՏ ԴՈՆԱԼԴ ՏՈՒՍԿԻՆ՝ ԵԽ ՆԱԽԱԳԱՀ

*Եվրոպական խորհրդի նիստում միաձայն որոշմամբ խորհրդի հաջորդ նախագահ է նշանակվել Լեհաստանի վարչապետ Դոնալդ Տուսկը: Նա երկրորդ անձն է, որ ստանձնում է այդ պաշտոնը: Առաջինն այդ պաշտոնը ստանձնել է Հերման վան Ռոմպոյը:*

*Իսկ Իտալիայի արտաքին գործերի նախարար Ֆեդերիկա Մոգերինին ընտրվել է ԵՄ-ի դիվանագիտության նոր ղեկավար: Նա այդ պաշտոնում փոխարինելու է Քեթրին Էշտոնին:*

ՆԱՏՕ

## ՍՏԵՂԾՎՈՒՄ ԵՆ ՅՈԹ ԵՐԿՐՆԵՐԻ ԷՔՍՊԵԴԻՑԻՈՆ ՈՒԺԵՐ

*Հյուսիսատլանտյան դաշինքի մասնակից յոթ պետություններ Ուելսում, ՆԱՏՕ-ի գագաթնաժողովի ընթացքում, պայմանագիր են ստորագրել արագ հակազդման նոր կառուցվածքային ստորաբաժանում՝ միավորված էքսպեդիցիոն ուժեր ստեղծելու վերաբերյալ:*

*Միավորված էքսպեդիցիոն ուժերի կազմում կընդգրկվեն Մեծ Բրիտանիան, Էստոնիան, Լատվիան, Լիտվան, Դանիան, Նորվեգիան եւ Նիդերլանդները: Զորքերի հրամանատարությունը կիրականացնի Մեծ Բրիտանիան:*

*Համաձայնագրի ստորագրումից հետո, բանակցություններ կսկսվեն միավորված էքսպեդիցիոն ուժերի կառուցվածքի, նոր ստորաբաժանման թվակազմի եւ դրա ստեղծման գործում մասնակից երկրներից յուրաքանչյուր ներդրման շուրջ:*

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՏԵՆՍԻՎ Է ԵՎ ՊՐԱԳՄԱՏԻԿ»



*Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին Ռուսաստանի նկատմամբ երկրի ղեկավարության վարած քաղաքականությունը համարել է «ինտենսիվ ու պրագմատիկ» եւ նշել է, որ Մոսկվայի կողմից վրացական ապրանքների բռնարգելքի վերականգնում չի սպասում:*

«Դուք գիտեք, որ մեր կողմից մեկ կառուցողական քայլ չէ, որ արվել է, եւ դրա շնորհիվ մենք ազատորեն իրականցնում ենք մեր արտադրանքի արտահանումը Ռուսաստան: Դուք գիտեք, որ Ռուսաստանը հնչեցրել է Վրաստանի հետ ազատ առեւտրի վերացման հնարավորության գաղափարը, սակայն դա չի նշանակում, թե բռնարգելք կսահմանվի»,- օգոստոսի 24-ին լրագրողներին ասել է Ղարիբաշվիլին: Ընդհակառակը, նրա խոսքով, «խոսքը վերաբերում է այն բանին, որ Ռուսաստանին մատակարարվի ավելի շատ արտադրանք»:

«Դա մեր կառուցողական, պրագմատիկ, ճիշտ եւ խելամիտ ազգային գաղափարախոսության եւ քաղաքականության արդյունքն է: Ես ողջունում եմ այն կառուցողական քայլերը, որոնք ձեռնարկվում են Ռուսաստանում: Դա շատ լավ է մեր երկրի համար»,- նշեց Իրակլի Ղարիբաշվիլին:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԵՐԹԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

*Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին եւ առողջապահության փոխնախարար Մարիամ Դաշին ներկայացրին երկրի հարկային օրենսգրքում կատարվելիք հերթական փոփոխությունները:*

Դրանք վերաբերում են համերաշխության հիմնադրամի եւ դրանից օգտվող անձանց հարկադրմանը:

Ֆինանսների նախարարության մշակած օրինանախագծի համաձայն, ֆիզիկական անձինք, ոչ գործարարական իրավաբանական անձինք, բարեգործական գործունեության շրջանակներում, կօգտվեն համերաշխության հիմնադրամի ֆինանսական օգնությունից, ազատվում են եկամտահարկից:

Գործող օրենսդրությամբ, եթե անձը տարվա ընթացքում որպես եկամուտ ստացել է ավելի քան 40 հազար լարի, պարտավոր է մուծել եկամտահարկ: Հետեւաբար, անձինք, ովքեր համերաշխության հիմնադրամից կստանան ֆինանսական օգնություն, այդ օգնությունը կարող է համարվել նրանց եկամուտը, եւ հնարավոր է նրանց տարեկան եկամուտը գերազանցի 40 հազար լարին, իսկ այդ դեպքում նրանք պարտավոր են մուծել եկամտահարկը, ինչն է՛լ ավելի կբարելավի նրանց սոցիալական վիճակը: Մշակված փոփոխության համաձայն, համերաշխության հիմնադրամից ստացված օգնությունը չի համարվում ֆիզիկական անձի եկամուտ, եւ նա ազատվում է եկամտահարկից:

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԸՆԴԳՐԿՎԵԼ ԵՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ



*Կենսաթոշակառուները, մինչեւ 5 տարեկան երեխաները, ուսանողները եւ սահմանափակ հնարավորություններով անձինք սեպտեմբերի 1-ից ընդգրկվել են համընդհանուր առողջապահության ծրագրում:*

Ինչպես հայտարարեց առողջապահության փոխնախարար Զազա Սոպրոմաձեն, ապահովագրական նոր պայմաններից կարող է օգտվել շուրջ 400 հազար քաղաքացի:

«Սեպտեմբերի 1-ից կենսաթոշակառուների, մինչեւ 5 տարեկան երեխաների, ուսանողների եւ սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց բժշկական սպասարկումը, մասնավոր ապահովագրական ընկերությունների փոխարեն, կիրականացնի պետությունը: Նրանց նախկին ապահովագրական ծրարը կպահպանվի, սակայն կընդլայնվի օպերատիվ սպասարկումը եւ, ըստ իս, նաեւ սպասարկման որակը»,- հայտարարեց Զազա Սոպրոմաձեն:

Նրա խոսքերով, ծրագրում ընդգրկված անձանց համար կնվազեցվի նաեւ ծրագրված վիրահատության համար սահմանված ժամկետը: «Մասնավորապես, մասնավոր ապահովագրության պայմաններով, այդ ժամկետը կազմում է 4 ամիս, իսկ այժմ դա նվազեցված է մինչեւ երկու ամիսը: Բացի այդ, սեպտեմբերի 1-ից նրանց տրվում է ազատ ընտրության իրավունք, այսինքն՝ նրանք բժշկական սպասարկումը կկարողանան ստանալ այն կլինիկայում, որը կգերադասեն»,- նշեց փոխնախարարը:

Նա հայտարարեց նաեւ, որ քաղաքացիները ապահովագրական ընկերության փոխարեն կարող են խորհրդատվությունների համար դիմել համընդհանուր ապահովագրական գրասենյակներին, որոնք կգործեն երկրի մասշտաբով:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

## ՌԱՈՒԼ ԽԱՋԻՄԲԱՆ՝ ԱԲԽԱԶԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ



*Ընդդիմության առաջնորդ Ռաուլ Խաջիմբան, նախնական տվյալներով, հաղթել է Աբխազիայում օգոստոսի 24-ին կայացած նախագահական ընտրությունների առաջին փուլում՝ հավաքելով ընտրողների քվեների 50,57 տոկոսը (50494 ձայն):*

Աբխազիայի օրենսդրության համաձայն, առաջին փուլում հաղթող է դառնում այն թեկնածուն, որը հավաքում է քվեների 50 տոկոսը՝ գումարած մեկ քվե: Այսպիսով, Խաջիմբան դառնում է հանրապետության նախագահ:

Խաջիմբայի անմիջական մրցակիցը՝ Աբխազիայի անվտանգության ծառայության ղեկավարի պաշտոնակատար Ասլան Բժանիան, հավաքել է քվեների 35,91 տոկոսը, պաշտպանության նախարարի պաշտոնակատար Մերաբ Կիշմարայի օգտին քվերակել է ընտրողների 6,4 տոկոսը, ներքին գործերի նախարարության նախկին ղեկավար Լեոնիդ Ձապշբայի օգտին՝ 3,4 տոկոսը: Բոլոր թեկնածուների դեմ քվեարկել է ընտրողների 1,8 տոկոսը: Քվերակությանը մասնակցել է ընտրողների 70 տոկոսը:

## ՊԱԱՏԱ ԶԱՔԱՐԵԻՇՎԻԼԻ. «ԹԲԻԼԻՍԻՆ ՊԱՏՐԱՍՏ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ ԱԲԽԱԶԻԱՅԻ ԴԵ-ՖԱԿՏՈ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ»



*Տեղեկատվական «Ռեպորտյոր պորտալը» վերջերս ուշադրությունը բեւեռեց «Նեզավիսիմայա գազետա» թերթի հրապարակումներից մեկին, որը նվիրված էր օգոստոսի 24-ին Աբխազիայում անցկացված նախագահական ընտրություններին:*

Հոդվածում Աբխազիայում նախագահական ընտրությունների անցկացման կապակցությամբ նշված է, որ պաշտոնական Թբիլիսին բողոք չի հայտնել այն կապակցությամբ, որ Աբխազիայում ապրող 22 հազար վրացիներ զրկված են ընտրություններին մասնակցելու իրավունքից: Հոդվածում նաեւ նշված է, որ Վրաստանի իշխանությունը իրատեսորեն է գնահատում ստեղծված իրավիճակը, եւ քանի որ Աբխազիայի տարածքը բռնազավթված է ռուսական զորքերի կողմից, ապա Աբխազիայի բոլոր բնակիչների իրավունքները խախտված են, եւ դրա պատասխանատվությունը դրվում է ռուսական կողմի վրա:

«Նեզավիսիմայա գազետային» տված հարցազրույցում Վրաստանի վերաինտեգրման նախարար Պաատա Զաքարեիշվիլին հայտարարեց, որ ճիշտ է, պաշտոնական Թբիլիսին չի ճանաչում օգոստոսի 24-ին նշանակված նախագահական ընտրությունները, սակայն կարեւոր է համարում, որ ընտրություններն անցնեն առանց միջադեպի, եւ պաշտոնական Թբիլիսին պատրաստ է համագործակցել Աբխազիայի դե-ֆակտո նոր նախագահի հետ:

Հոդվածում ներկայացված է նաեւ աբխազ քաղաքագետ Իբրահիմ Ճկադուայի կարծիքը, ըստ որի, Աբխազիայում բնակվող վրացիների ընտրության իրավունքից զրկումը իրավախախտում է, քանի որ Աբխազիայի քաղաքացիներն օգտվում են երկակի քաղաքացիությունից եւ ունեն Ռուսաստանի ու Աբխազիայի անձնագրեր, եւ որ այդ իրավունքը նրանց Ռուսաստանն է շնորհել:

Աբխազիայի նախագահական ընտրություններում առաջատարը համարվում է Ռաուլ Խաջիմբան, թեպետ ընտրություններին մասնակցում են այլ թեկնածուներ, եւ առանձին քաղաքագետներ չեն բացառում ընտրությունների երկրորդ տուրի անցկացումը: Քաղաքագետները նշում են նաեւ, որ ընտրությունները կանցնեն խաղաղ իրավիճակում, եւ բնակչությունը համակրանքը տածում է ոչ թե ընտրական ծրագրի, այլ առանձին անհատների նկատմամբ:



### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ՝ ԺԱՄԸ 9-ԻՑ

*Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախաձեռնությամբ, սեպտեմբերի 1-ից պետական հաստատություններում աշխատանքային օրը, ժամը 10-ի փոխարեն, սկսվեց ժամը 9-ին: Ինչպես մինչ այդ հայտարարել է վարչապետը. «Մենք աստիճանաբար պետք է սովորենք ավելի վաղ աշխատել»: Ընդսմին, նա նշել էր, որ վերոնշյալ նախաձեռնությունը չի վերաբերում մի շարք գերատեսչությունների, մասնավորապես՝ ներքին գործերի նախարարության, ֆինանսների նախարարության հատուկ միավորումներին, քրեակատարողական նախարարությանը եւ այլն:*

### ՍԱԿԱԳՆԵՐԸ ՄՆԱՑԻՆ ԱՆՓՈՓՈԽ

*Վրաստանի էներգակարգավորման ազգային հանձնաժողովը անփոփոխ թողեց «Էներգո պրո Ջորջիա»-յի սակագները: Համապատասխան որոշումն ընդունվել է օգոստոսի 22-ին, հանձնաժողովի նիստում:*

*Հանձնաժողովի որոշմամբ, աստիճանական սակագինը մնացել է անփոփոխ: Սակագնի համաձայն, 0-ից 100 կիլովատտ էլեկտրաէներգիայի ծախսման դեպքում սակագինը կիլովատտի հաշվով կկազմի 7,630 թեթրի, 101-ից մինչեւ 300 կիլովատտ էլետրաէներգիայի ծախսման դեպքում՝ 11,0 թեթրի, իսկ 301 եւ ավելի կիլովատտի ծախսման դեպքում՝ 14,83 թեթրի: Մինչեւ որոշման ընդունումը, հանձնաժողովը քննարկեց սակագների դեպարտամենտի ներկայացրած տեղեկատվությունը եւ դրա հիման վրա կազմած տնտեսական վերլուծությունը: Հանձնաժողովի որոշմամբ, սակագինը անփոփոխ կմնա մինչեւ 2015 թվականի վերջը:*

### ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱՆՎՃԱՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ՝ ՏԱՔՍՈՒ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Վրաստանի զբոսաշրջության ազգային վարչության նախաձեռնությամբ, տաքսու վարորդների համար անցկացվում են անգլերենի անվճար դասընթացներ: Պիլոտային ծրագրի տեւողությունը 8 շաբաթ է: Դասընթացի ավարտից հետո, վարորդը ստանում է հավաստագիր եւ «English Speaking Driver» ազդագիր, որը կկարողանա փակցնել հողմնապակու վրա: Այն կծառայի որպես զբոսաշրջիկներին սպասարկելու նշան:*

*Դասընթացների երկրորդ փուլին կարող է մասնակցել տաքսու 8 վարորդ: Ինչպես հայտարարեցին զբոսաշրջության վարչությունում, ծրագիրն առնչվում է Վրաստանում զբոսաշրջիկների հոսքի ավելացմանը եւ հետապնդում է հյուրերին մատուցվող ծառայության որակի բարձրացման նպատակ:*

### ՎՐԱՑ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԸ՝ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԶԻՆՎՈՐ ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ

*Առաջադրանքի հաջող կատարման եւ ցուցաբերած արիության համար վրաց զինծառայողը ճանաչվել է լավագույն զինվոր: Միջազգային ուժերի հրամանատարությունը Աֆղանստանում տեղաբաշխված լեռնահետախուզական գումարտակի ծառայող, շարքային Լեւան Մարգվելիանուն ճանաչել է որպես շաբաթվա լավագույն զինվոր:*

*Ինչպես տեղեկացրել է Վրաստանի պաշտպանության նախարարը, Աֆղանստանում հարավային տարածաշրջանային հրամանատար, գեներալ-մայոր Մայքլ Դիլսը վրաց զինվորին հանձնեց պաշտոնական հավաստագիրը: Շարքային Մարգվելիանին «Փասաբ» ռազմակայանում գիշերային եւ ցերեկային պարեկության ժամանակ ցուցաբերած արիության, տրված առաջադրանքի հաջող կատարման համար արժանացել է պարգեւի:*

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱՆ ԸՆԴԱՌԱՋ

# ՎՐԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԵՐՈՒՄ, ԿՐԹԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ, ԿՈՒՍԱՆԻ 217 ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂ

*2005 թվականին Վրաստանի կառավարությունը կյանքի կոչեց կրթական նոր համակարգ, որը հետագայում եւ առ այսօր համարվեց երկրում իրագործված ամենահաջող բարեփոխումներից մեկը:*

Ի թիվս մյուս նորարարությունների, 2008 թվականին «Ընդհանուր ունակություններ» քննաթեստը թարգմանվեց հայերեն եւ ադրբեջաներեն: Դրանով ներմուծվեց հատուկ ծրագիր, որի համաձայն, ոչ վրացական դպրոցի շրջանավարտը` ընտրելով համապատասխան բուհն ու հանձնելով մեկ` «Ընդհանուր ունակություններ» քննությունը ու այն էլ` մայրենի լեզվով, հնարավորություն ստացավ ուսանել Թբիլիսիի Ի.Ջավախիշվիլու, պետական բժշկական, պետական ճարտարագիտական եւ Ի.Ճավճավաձեի անվան լեզվաբանական համալսարաններում: Հայ ու ադրբեջանցի ուսանողները, ովքեր բուհի ընդհանուր թվի 10 տոկոսն են կազմում, մեկ տարվա ընթացքում հիմնավորապես սովորում են վրաց լեզու եւ գրականություն` փաստորեն համարվելով բուհի զրո կուրսի ուսանող: Եվ սակայն, ողջ տարվա ընթացքում ուսանողները կրթական իրենց բարձր չափանիշով հարկադրվում են, այսպես կոչված, կրեդիտներ հավաքել: Կրեդիտի ոչ բավարար քանակը պատճառ է դառնում ուսման ընդհատման, իսկ ճիշտ քանակը նախադրյալ` նույն բուհի նախընտրած ֆակուլտետի առաջին կուրս ավտոմատ կերպով փոխադրվելու համար:

Վրաստանի ազգային փոքրամասնությունների, իրավամբ ձեռք մեկնող ծրագիրը, որի շարունակականության մասին, ի դեպ, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունում լավատեսորեն են խոսում, այս տարի նույնպես իր ընթացքն ունեցավ: Ինչպես տեղեկացանք նախարարության մամլո ծառայությունից, 2014-2015 ուստարվա ծրագրի շրջանակներում ուսանելու է 217 հայ ուսանող: Այստեղից 89 հոգի ստացել է 100 տոկոսանոց գրանտ (դրամաշնորհ): Ու թեեւ նախարարությունում դեռ ստույգ հայտնի չէ ուսանողների բաշխման թիվն ըստ բուհերի, այդուհանդերձ, ուսումնական հաստատություններից յուրաքանչյուրի ղեկավարությունն այդ տվյալներն արդեն արձանագրում է:

Այսպես, Թբիլիսիի Ի.Ջավախիշվիլու անվան պետական համալսարանում ունենք 113 հայ ուսանող, թեեւ հատկացված էր 197 տեղ: Նույն այդ քանակը նախատեսված էր ադրբեջանցի ուսանողների համար: Եվ սակայն, ինչպես մեզ հետ զրույցում փաստեց բուհի հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Դարեջան Թվալթվաձեն, այս տարի նրանց թիվը կազմելու է 207` հայ ուսանողների պակասի հաշվին:

- Ադրբեջանցի դիմորդների թիվը միշտ էլ էապես գերազանցում է, - ասում է տիկին Դարեջանը,- բայց հայ դիմորդների թվի աճ, ինչ խոսք, նույնպես կա: Օրինակ` 2009 թվականին ընդհանուր առմամբ գրանցվել էր 14 ադրբեջանցի եւ ավելի պակաս հայ ուսանող: Ուստիեւ, ներկայիս չափանիշը խոսում է աճող շահագրգռվածության մասին: Ինչ վերաբերում է ուսման ընթացքին, ապա, սեպտեմբերի 1-8-ը ներառյալ, կսկսվի ուսանողների գրանցման փուլը, որ կիրականացվի մաս-մաս, իսկ մանրամասները կտեղադրվեն նախարարության ու համալսարանի վեբ-կայքում: Նրանք, ովքեր դրամաշնորհ չեն ստացել կվճարեն գումարի մի մասը: Արդեն սեպտեմբերի 9-15-ը կտեղադրվի ուսման տարածքի` մասնաշենքի վերաբերյալ ինֆորմացիա, որն առավելապես կվերաբերի մրցութային կարգով անցած ուսանողներին, քանի որ հատուկ ծրագրում ընդգրկված բոլոր ուսանողները հաճախելու են Հավլաբարում գտնվող մեր համալսարանի 7-րդ մասնաշենք: Եվ արդեն սեպտեմբերի 15-ից կմեկնարկի ուսանողական առօրյան:

Բնականաբար, մեզ մնում է միայն ջանադրություն, գիտելիքով զինվելու ամենակարեւորություն մաղթել ուսանողներից յուրաքանչյուրին, որովհետեւ որքան էլ ծանոթ-բարեկամներ կամ գումարներ «խաղան», միեւնույն է, գերկարեւորը եղել, կա ու մնում է մեր ունեցած գիտելիքի պաշարն ու հարուստ մտահորիզոնը: Շնորհավո՜ր նոր ուսումնական տարի:

*ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ*

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

# ԴԵՂՈՐԱՅՔԸ` ՄԻԱՅՆ ԴԵՂԱՏՈՄՍԵՐՈՎ

*Սեպտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել նոր կարգ, ըստ որի, առանձին դեղատեսակներ առանց դեղատոմսերի չեն վաճառվի:*



«Դեղորայքի եւ դեղագործական գործունեության մասին» օրենքում կատարված փոփոխության համաձայն, դեղատները ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ից առանց դեղատոմսի չեն վաճառի, այսպես կոչված, երկրորդ կարգի դեղորայք, այդ թվում` քնաբեր եւ հանգստացուցիչ միջոցները (բացառությամբ բուսական պրեպարատների), հակադեպրեսանտների, համակարգային օգտագործման համար նախատեսված հակամիկրոբային եւ հակաուռուցքային պրեպարատների, իմունախթանիչների, սրտանոթային գլիկոզիտների, հակահիպերտոնիկ պրեպարատների, շաքարախտի եւ ներարկման դեղորայքի, վիտամինների որոշակի հատվածի եւ այլն:

Բժշկական գործունեության կարգավորման պետական գործակալության կողմից հրապարակված տեղեկատվության համաձայն, սպառողները պարտավոր են ներկայացնել դեղատոմսեր այնպիսի դեղորայքի ձեռքբերման համար, ինչպիսիք են նեմիսիլը, կետանոլը (սրվակներով), գլյուկոզան, դիմեդրոլը, պարացետամոլը, սուպրաստինը (սրվակներով), անալգինը (սրվակներով), ստրեպտոմիցինը, վիագրասանը, վիտամին E դրամինան, էրիտրոմիցինը (սրվակներով), էսենցիալե H, ամոքսիկլավը եւ այլն, ընդհանուր առմամբ` երկրորդ խմբի 6209 անուն դեղորայք:

Ինչ վերաբերում է երրորդ խմբի դեղորայքի ցուցակին, որոնք կարող են վաճառվել առանց դեղատոմսերի, ապա դրանում ընդգրկված է ավելի քան 3 հազար անուն դեղորայք, այդ թվում` աղեստամոքսային տրակտի հիվանդությունների համար նախատեսված դեղերը, վիտամիններն ու հանքային նյութերը (բացառությամբ` ներարկման լուծույթների), ջերմիջեցնող եւ հակաբորբոքային միջոցները, հազի եւ խորխի դեմ միջոցները եւ այլն:

Սեպտեմբերի 1-ից արգելվել է դեղորայքի վաճառքը անչափահասներին:

Հիշեցնենք, որ բժշկական գործունեության պետական կառավարման գործունեության պաշտոնական կայքէջում տրված են դեղորայքի բոլոր այն ցուցակները, որոնք վաճառվելու են դեղատոմսերով, եւ որոնք հնարավոր է ձեռք բերել առանց դեղատոմսերի:

*ՄԱՆԻԿ ԱՐԵՎՅԱՆ*

# ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ ԵՆ ԿՐԹԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ

(Սկիզբը` 4-րդ էջում)

Հուսով ենք` նշված խնդիրներն իրենց դրական լուծումները կստանան հաջորդ ուսումնական տարում մեզ Մետրոշինարարների թաղամասի նոր դպրոցը տեղափոխելու հարցի լուծման միջոցով:

***ՀԱՍՄԻԿ ԴՈՆԱԿԱՆՅԱՆ (թիվ 132 դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի).***

- Թիվ 132-ը, ինչպես գիտեք, վրաց-ռուս-հայկական դպրոց է: Ներկայումս դպրոցի վրաց-ռուսական բաժինների աշակերտության զգալի հատվածը կազմում են հայ երեխաները: Բայց արի ու տես, որ ո'չ այդ հանգամանքը, ո'չ էլ քարոզչական աշխատանքները չեն շտկում վիճակը: Արդյունքում` դպրոցն ունի մեկ առանձին (5-րդ) եւ վեց կոմպլեքս դասարաններ (2-4, 8-9, 10-11):

Այս ուսումնական տարվա համար, նույն պատճառով, հայկական բաժինը առայժմ չունի առաջին դասարանի համար գրանցվածներ:

Նոր ուսումնական տարվան ընդառաջ, մեր դպրոցում կատարվել են մասնակի վերանորոգումներ:

Ավելացնենք, որ մեր զրուցակիցները հույս հայտնեցին Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության կողմից առաջին դասարանցիների գրանցման չորրորդ փուլի ձեռնարկման հավանականության մասին:

Ինչպես գիտեք, կրթության եւ գիտության նախարարության որոշումով, առաջին դասարանցիների գրանցումը շարունակվեց սեպտեմբերի 1-2-ը: «მთელი კვირა» թերթին տրված հարցազրույցում, կրթության եւ գիտության փոխնախարար Լիա Գիգաուրին այդ առումով ասաց, որ գրանցումը շարունակվեց այն երեխաների համար, որոնց ծնողները, տարբեր պատճառներով, մինչ այդ, չէին իրականացրել նրանց գրանցումը:

Փոխնախարարը նշեց նոր ուստարվա նորույթների մասին: Այդ շարքում խոսեց աշակերտներին բաժանվող անվճար դասագրքերի, անցյալ տարիների համեմատությամբ այս տարի ավելի որակյալ թղթով եւ տառատեսակով կազմված ու շարված լինելու մասին: Նաեւ այն, որ «բուկի» փոխարեն, արդեն կունենան անձնական համակարգիչներ, որոնք նախկին «բուկերից» կտարբերվեն ավելի լավ ցուցանիշներով եւ բեռնավորված ծրագրով:

Նորույթ է նաեւ` առաջին դասարանի «դասղեկի ժամին» շաբաթը մեկ ընթերցանության ժամի անցկացումը, որի ընթացքում կվերարտադրվի կարդացված նյութը: Դա աշակերտի մեջ կզարգացնի արդեն բարձր դասարաններում անհրաժեշտ` տրամաբանելու եւ հիմնավորված մտածողության կարողությունները: Նման ժամեր կլինեն նաեւ երկրորդ, երրորդ, չորրորդ դասարաններում:

Փոխնախարարը նշեց եւ այն, որ ներկայումս իրականացվում է 9-ը դպրոցի կառուցում, որոնցից 2-ի նախագծումը ավարտված է, իսկ մնացած յոթինը գրեթե մոտենում է ավարտին: Որ միեւնույն ժամանակ իրականացվում է 100-ից ավելի դպրոցների վերանորոգում, ինչը մինչեւ ուստարվա սկսվելը կավարտվի:

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

# ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՈՒԺԻ ՄԵՋ ԵՆ ՄՏԵԼ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՆՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ




*Վրաստանում սեպտեմբերի 1-ից ուժի մեջ են մտել միգրացիոն նոր կանոններ:*

Ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ին ուժի մեջ մտան «Օտարերկրացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց իրավական վիճակի մասին» օրենքում կատարված փոփոխությունները, ըստ որի, Վրաստանում կիրարակվում են հինգ կարգի այցեգրեր, որոնց ստացման համար այլ երկրների քաղաքացիները պարտավոր են դիմել ըստ մշտական բնակության վայրի վրացական հյուպատոսություններին: Երկրում օտարերկրացիների գտնվելու ժամկետը կես տարվա ընթացքում կրճատվել է մինչեւ 90 օր, իսկ ավելի երկար բնակության համար կպահանջվի հատուկ այցեգիր կամ կեցության վկայական:

«Սեպտեմբերի 1-ից ուժի մեջ են մտնում նոր կանոններ, որոնք վերաբերում են բոլոր օտարերկրացիներին, այն երկրներին, որոնց հետ Վրաստանն ունի կամ չունի այցեգրային ռեժիմ: Մշակված է Վրաստանում գտնվելու միասնական համակարգ»,- հայտարարեց Վրաստանի ԱԳ նախարարության հյուպատոսական դեպարտամենտի ղեկավար Գիորգի Տաբատաձեն:

Այն երկրների համար, որոնց վրա տարածվում է այցեգրային ռեժիմը, Վրաստանը կտրամադրի 180 օր գործողության ժամկետով բազմակի օգտագործման այցեգրեր` այդ ժամանակահատվածում ընդհանուր առմամբ 90 օր երկրում գտնվելու իրավունքով:

Անայցեգիր ռեժիմի դեպքում, որը Վրաստանում գործում է եվրոպական երկրների, ՆԱՏՕ-ի եւ ԱՊՀ անդամ երկրների, ինչպես նաեւ այն երկրների համար, որոնք «Վրաստանի կարեւոր գործընկերներն են, եւ որոնց հետ ձեւակերպված են երկկողմ ու բազմակողմ համաձայնագրեր», այդ երկրների քաղաքացիները կկարողանան առանց այցեգրերի կես տարվա ընթացքում ընդհանուր առմամբ Վրաստանում գտնվել 90 օր:

Բոլոր նրանք, ովքեր ցանկանում են Վրաստանում գտնվել ավելի երկար ժամանակահատված, մշտական բնակության երկրի վրացական հյուպատոսությունից պետք է ստանան համապատասխան այցեգիր: Սահմանագծում այցեգրի ստացումը հնարավոր կլինի միայն բացառիկ դեպքերում: Միաժամանակ, կկիրարկվի կեցության թույլտվության հանձնման գործընթացը:

Սեպտեմբերի 1-ից Վրաստանում կիրարկվում է հինգ կարգի այցեգիր` արտագաղթային, դիվանագիտական, հատուկ, օրդինալային եւ տարանցիկ:

Արտագաղթային այցեգրի կարգը ներառում է ուսանողական, աշխատանքային այցեգրերը, գործարարական գործունեության իրականացման նպատակով այցեգիրը, ինչպես նաեւ ընտանիքի միավորման այցեգիրը:

Դիվանագիտական այցեգրեր կտրվեն այլ երկրների առաջին անձանց, բարձր մակարդակի պատվիրակություններին, ինչպես նաեւ նրանց ընտանիքի անդամներին Վրաստան` պետական, պաշտոնական, աշխատանքային, բարեկամական կամ ոչ պաշտոնական այցեր կատարելու համար: Միաժամանակ, դիվանագիտական այցեգրեր կտրվեն գործող դիվանագետներին եւ պատվավոր հյուպատոսներին:

Հատուկ այցեգրերը նախատեսված են օտարերկրյա պատվիրակությունների ներկայացուցիչների, նրանց ուղեկցող անձանց եւ ընտանիքի անդամների, դիվանագիտական ներկայացուցչությունների սպասարկման եւ վարչատեխնիկական անձնակազմի, երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի հիման վրա Վրաստան մուտք գործած անձանց, ինչպես նաեւ այն անձանց համար, ում մուտքը Վրաստան համապատասխանում է երկրի պետական շահերին:

Օրդինալ այցեգրերի հանձնումը նախատեսված է իրականացնել զբոսաշրջային նպատակներով, հարազատներին, մերձավորներին, բարեկամներին այցելելու, գործնական բանակցություններին, գիտական, մշակութային, մանկավարժական, մարզական միջոցառումներին մասնակցելու համար: Օրդինալ այցեգրեր կտրվեն նաեւ Վրաստանի նավահանգիստներում կառանած նավերի անձնակազմի անդամներին, լրագրողներին, բարեգործական, մարդասիրական առաքելություններ իրականացնողներին, հոգաբարձուներին, բուժման նպատակով, հարազատների շիրիմներին, մերձավորներին, բարեկամներին, սրբավայրեր այցելություններ կատարող անձանց:

Տարանցիկային այցեգիրը օտարերկրացիներին կտրվի հնգօրյա ժամկետով Վրաստանի տարածքով երրորդ պետություն անցնելու համար:

«Օտարերկրացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց իրավական վիճակի մասին» օրենքում կատարած փոփոխության համաձայն, նախատեսված է ներդրողների համար ստեղծել բարենպաստ իրավիճակ: Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ԱԳ նախարարությունը, այն օտարերկրացիները, ովքեր Վրաստանում կատարում են առնվազն 300 հազար լարիի ներդրում, «Ներդրումային գործունեության աջակցության եւ երաշխիքների մասին» օրենքի համաձայն, կտրվեն Վրաստանում մշտական բնակության իրավունքով բնակության թույլտվություններ: Նման դեպքերում, օրենքը նախատեսում է ընթացակարգի դյուրացում, մասնավորապես, ներդրողը կարող է իրավասու մարմնին դիմել ցանկացած կարգի այցեգրի ստացման համար եւ դրա հիման վրա ստանալ բնակության ներդրումային թույլտվություն:

«Հյուպատոսական տուրքի մասին» օրենքում կատարած փոփոխության համաձայն, սեպտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել այն դրույթը, ըստ որի, Վրաստան այցելելու այցեգրի հանձնման հարցի քննարկման արժեքը կազմում է 50 ԱՄՆ դոլար:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ*